

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի 2019թ. դպրոցական
օլիմպիադայի առաջին (դպրոցական) փուլի
/տևողությունը – 90 րոպե/

11 - 12 – րդ դասարաններ
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Բնութագրումով որոշել մեթոդը.

Աշխարհագրության գիտական ճանաչողության այդ մեթոդը ծագել է նրա հետ մեկտեղ և հարյուրամյակներ շարունակ եղել է աշխարհագրական գիտելիքների ձեռքբերման միակ աղբյուրը: Ո՞ր մեթոդն է .

- | | |
|--------------------------------|------------------|
| 1. համեմատական – աշխարհագրական | 2. նկարագրական |
| 3. դաշտային (արշավախմբային) | 4. քարտեզագրական |

2. Քարտեզում երկու կետերի հեռավորությունը 6 սմ է, իսկ իրականում՝ 480 կմ: Քարտեզի մասշտաբը կլինի.

- | | | | |
|-------------------|------------------|----------------|---------------|
| 1. 1 : 80 000 000 | 2. 1 : 8 000 000 | 3. 1 : 800 000 | 4. 1 : 80 000 |
|-------------------|------------------|----------------|---------------|

3. Ո՞ր պնդումն է ճիշտ.

1. Զուգահեռականները հատակագծի կամ քարտեզի վրա տեղանքի հավասար բացարձակ բարձրություն ունեցող կետերը միացնող գծերն են:
2. Բացարձակ բարձրությունը ցույց է տալիս, թե Երկրի մակերևույթի որևէ կետ որքանո՞վ է բարձր մեկ այլ կետից:
3. Համաշխարհային օվկիանոսում ամենամեծ բացարձակ խորություն ունեցող կետը Ատլանտյան օվկիանոսում է:
4. Երկրի մակերևույթի բոլոր անհարթությունների ամբողջությունը կոչվում է ռելիեֆ:

4. Երկրի օրական պտույտի հետևանք չէ.

- | | |
|--|-------------------------------|
| 1. գիշերվա և ցերեկվա հերթափոխը | 2. ժամերի տարբերությունը |
| 3. օդի ջերմաստիճանի օրական փոփոխությունը | 4. տարվա եղանակների հերթափոխը |

5. Ո՞ր հրաբուխն է Խաղաղօվկիանոսյան «Հրե օղակում».

- | | | | |
|-------------|-----------|----------|-------------|
| 1. Կոտոպախի | 2. Նեմրոփ | 3. Հեկլա | 4. Կամերուն |
|-------------|-----------|----------|-------------|

6. Միջերկրածովային կլիմա ունեցող շրջաններում ձմռանը թափանցում են.

- | | |
|-------------------------------------|----------------------------------|
| 1. հասարակածային օդային զանգվածները | 2. բարեխառն օդային զանգվածները |
| 3. արևադարձային օդային զանգվածները | 4. արկտիկական օդային զանգվածները |

7. Ո՞ր զուգորդությունն է ճիշտ.

- | | |
|---|--------------------------------------|
| 1. Հյուսիսային Ամերիկա – տունդրա – հաճարենի | 2. Աֆրիկա – կամպոս – բառբար |
| 3. Եվրասիա – պամպա – ֆիկուս | 4. Հարավային Ամերիկա – սելվաս – հևեա |

8. Բնակչության բնական աճի նվազման վրա չի ազդում.

1. կանանց կրթական մակարդակի բարձրացումը
2. կանանց զբաղվածության աճը
3. ուրբանիզացման մակարդակի բարձրացումը
4. աշխատանքի աշխարհագրական բաժանումը

9. Ո՞ր երկրի էներգետիկական հաշվեկշռում առավել մեծ բաժին ունեն ստոմային էլեկտրակայանները.

- | | | | |
|-------------|------------|-----------|-----------------|
| 1. Գերմանիա | 2. Ֆրանսիա | 3. Իտալիա | 4. Մեծ Բրիտանիա |
|-------------|------------|-----------|-----------------|

10. Ընտրել ճիշտ տարբերակը.

Ա. Թուրքիայում բնակչության թվով երկրորդ ազգը քրդերն են:

Բ. Թուրքիայի բնակչության գերակշիռ մասը շիա մահմեդականներն են:

1. Ա – ն և Բ – ն սխալ են

2. Ա – ն սխալ է, Բ – ն՝ ճիշտ

3. Ա – ն ճիշտ է, Բ – ն՝ սխալ

4. Ա – ն և Բ – ն ճիշտ են

11. Լատինական Ամերիկայում ո՞ր կրոնն է առավել տարածված.

1. կաթոլիկությունը

2. բողոքականությունը

3. ուղղափառությունը

4. մահմեդականությունը

12. Արաքսի վտակներից չէ.

1. Ախուրյանը

2. Մեծամորը

3. Մակուն

4. Թարթառը

13. Երկաթուղային հանգույց է.

1. Արմավիրը

2. Հրազդանը

4. Արարատը

4. Ալավերդին

14. ԼՂՀ – ի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

1. միակ օդանավակայանը Շուշիում է

2. Հաղորդը և Մարտակերտը երկաթուղային կայարաններ են

3. Գորիս – Բերձոր – Ստեփանակերտ ավտոխճուղին անցնում է Լիսազորի լեռնանցքով

4. արդյունաբերության առաջատար ճյուղը մեքենաշինությունն է:

15. Հողերի աղակալումն առաջանում է.

1. գրունտային ջրերի մակարդակի բարձրացումից

2. խորքային վարից

3. թեք լանջերի և ձորակների անտառապատումից

4. սելավային հոսքերից:

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Երկու քաղաքներ գտնվում են հասարակածի վրա: Դրանցից մեկը գտնվում է արլ. ե.

20⁰-ի, իսկ մյուսը՝ արլ. ե. 28⁰-ի վրա: Որոշել դրանց միջև եղած ամենակարճ հեռավորությունը կիլոմետրով:

17. Օդի բացարձակ խոնավությունը 15 գ / մ³ է, իսկ այն հագեցնելու համար անհրաժեշտ է 30 գ / մ³

ջուր: Որոշել օդի հարաբերական խոնավությունը (%):

18. Բլրի ստորոտին մթնոլորտային ճնշումը 600 մմ է, իսկ գագաթին՝ 550 մմ: Որոշել բլրի

հարաբերական բարձրությունը (մ):

19. Երկրի բնակչության թիվը 12 մլն է, իսկ տարածքի մեծությունը՝ 200 հազ. կմ²: Որոշել բնակչության

միջին խտությունը (մարդ / կմ²):

20. Երկրի նավթի պաշարները կազմում են 660 մլն տոննա, իսկ տարեկան հանույթը՝ 3 մլն տոննա:

Որոշել երկրի ռեսուրսապահովվածությունը (տարի):